

Տիգրան Դավիթավյան

ՈԱԶՄԱԿԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՂԻԲԵՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ (1918-1920 թթ.)

**Թուրքիա, Ադրբեջան, Հայաստան, բանակ, ռազմական, փաշա, հրամանատար,
տարածք, Նուրի, զորք, 1918թ., 1920թ.**

1918-1920 թվականներին Հայաստանի առաջին Հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում հայ ժողովրդի դեմ գործել են ճակատում թուրք-ադրբեջանական բանակները, թիկունքում՝ երիտթուրքերն ու քեմալաճանապարհականները:

Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հռչակումը (1918 թ. մայիսի 28) ինքնին Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականության հետևանք էր՝ միաժամանակ ուղղված հայ ժողովրդի դեմ: Ադրբեջանի ստեղծման գաղափարը կազմել է պանթուրքիզմի բաղկացուցիչ մասը և մշտապես առանցքային դեր է ունեցել: Այդ մասին բազմիցս հայտարարել են երիտթուրքերը: Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Խատիսյանը վկայում է, որ Բաթումի կոնֆերանսի օրերին Վեհիբ փաշան (Մեհթին Վեհիբ, Բաթումի կոնֆերանսում Թուրքիայի պատվիրակության անդամ, Կովկասի ռազմաճակատի հրամանատար) նկարագրելով Թուրքիայի հետապնդած նպատակները և ցույց տալով քարտեզը, ասել է. «Մեր եղբայրները՝ Պաքուն, Դադստանը, Թուրքեստանն ու Ադրբեջանն են... մենք պետք է իջնենք Քուրի հովիտ ու երթանք Պաքու»¹: Իսկ արևելյան ռազմաճակատի հրամանատար Բյազիմ Կարաբեքիրին 1920 թ. նոյեմբերի 8-ին Անկարայից հղված հույժ գաղտնի հեռագրում ասված է. «...մեր գլխավոր եղբայրներն ազերիներն են, մեր հիմնական նպատակը՝ վերացնել Հայաստանը և օգնել Ադրբեջանին՝ ցամաքային կապ հաստատելով նրա հետ»²:

Դեռևս 20-րդ դարի սկզբներին դրինաթաթարական, վոլգաթաթարական և անդրկովկասաթաթարական մտավորականության շրջանում արդեն լայն տարածում էր ստացել պանթուրքիզմը. ինչը բացահայտ ռասայական, ծայրահեղական վերաբերմունք էր տարածում հատկապես հայ ժողովրդի նկատմամբ³: 1917 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին Բաքվում տեղի ունեցած Կովկասի մահմեդականների առաջին, երկրորդ և երրորդ կոնգրեսներում ընդունվեցին պանթուրքիստական որոշումներ: Դա պատահական չէր, քանզի Անդրկովկասում պանթուրքիզմի ջատագովը և անմիջական իրականացնողը մուսավաթն էր (ադրբեջանական մուսավաթական կուսակցությունը,

¹ Ջոհրաբյան Է., Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Եր., 2000, էջ 114:

² Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 192-194:

³ Տե՛ս Հովսեփյան Ա., Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր, Եր., 2012, էջ 77:

ստեղծված 1911 թ.), որի հետ թուրքական կառավարող շրջանակները և քաղաքական գործիչները մեծ հույսեր էին կապում: Անգամ Բաքվում գործել է պանիսլամական գլխավոր շտաբ: Անդրկովկասի՝ թաթարներով բնակեցված տարածքները կարևոր հենարան էին նրանց պաշտոնական գաղափարախոսության և քաղաքականության տարածման համար¹: 1918 թ. գարնանը թուրքական բանակի՝ Անդրկովկաս ներխուժումով սկիզբ դրվեց Անդրկովկասում թուրքական պետության ստեղծմանը²:

1918 թ. մայիսի 27-ին Նուրի փաշան (թուրք զորահրամանատար, Կովկասի իսլամական բանակի գեներալ, Էնվերի խորթ եղբայրը, որին Էնվերը հրամայել էր մաքրել Ադրբեջանը ռուսներից և հայերից³) մեծաքանակ զորքով գտնվում էր Գյանջայում, որտեղ էլ հաջորդ օրը հռչակվեց Ադրբեջանի անկախությունը (չատ հետազոտողներ հենց Նուրիին են համարում ԱԴՀ ստեղծող): Արդեն անկախություն հռչակած Ադրբեջանի մուսավաթական իշխանությունները Էնվեր փաշային հղած նամակում նշում էին, որ իրենք ամբողջովին պատրաստ են թուրքիայի մաս կազմելուն, սակայն «իրենց բացատրել են», որ թուրքիայի մեծ քաղաքականությունը պահանջում է Ադրբեջանի անկախացումն ու հզորացումը⁴:

1918 թ. մայիսի 28-ին ԱԴՀ-ի հռչակումից հետո ստեղծվում է առաջին կառավարությունը, որի կառուցվածքում ընդգրկվում է նաև ռազմական նախարարությունը: Ռազմական առաջին նախարար է նշանակվում Խոսրով բեկ Սուլթանովը, որը պաշտոնավարում է մեկ ամսից ոչ ավելի՝ մինչև հունիսի կեսերը, իսկ հունիսից մինչև նոյեմբեր ռազմական նախարար չի եղել, քանզի թուրքիան զորացրել և իր բանակներին էր միացրել ադրբեջանական զորամասերը, որոնք սկսել էին ենթարկվել թուրքական շտաբին: 1918 թ. նոյեմբերից ռազմական նախարարներ են եղել Ֆաթալի խան Խոյսկին և ռուսական բանակի հրետանու գեներալ Ալի բեյ Մեհմանդարովը: Ռազմական նախարարության առջև խնդիր էր դրվել ստեղծել 25 հազարանոց ազգային բանակ: Պետական բյուջեի ավելի քան 24 տոկոսը հատկացվում է ռազմական ծախսերին⁵:

Անկախության հռչակագրում ԱԴՀ-ի տարածքներ են հայտարարվում Արևելյան և Հարավային Անդրկովկասները, որով նա փորձ էր անում թուրքիայի հետ ուղիղ տարածքային կապն ապահովել Հայաստանի հաշվին⁶:

ԱԴՀ հռչակման պահին արդեն Ադրբեջանում հսկայական բանակ կար՝ ի դեմս Կովկասի իսլամական բանակի և 1917 թ. դեկտեմբերի 11-ին ձևավորված Անդրկովկասի

¹ Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում (1918-1990 թվականներ) <http://hayaryakanch.wordpress.com/2011/06/27/>:

² Տե՛ս Мелик-Шахназарян Л., Хачатрян А., Этнополитика Азербайджана, Ер., 2007, ст. 93:

³ Դեմոյան Հ., Ղարաբաղը և թուրքիայի ցեղասպանության փորձերը, www.genocide-museum.am/arm/word/AGMI%20G-Brief-12.doc

⁴ Տե՛ս Хейфец А.Н., Советская Россия и сопредельные страны востока (1918-20 гг.), М.1964, с. 54:

⁵ Bu gün Azərbaycanın Silahlı Qüvvələri Günüdür, 26 İyun 2013 (Այսօր Ադրբեջանի զինված ուժերի օրն է, 26 հունիսի, 2013, աղբ.), <http://www.gun.az/featured/76327>

⁶ Տե՛ս Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20թթ., Եր., 2008, էջ 24:

մուսուլմանական կորպուսի (այն իր մեջ ներառում էր երկու հրաձգային դիվիզիա, երկու հրետանային բրիգադ, մեկական հեծելազորային մարտկոց և առանձին բրիգադ, սակրավորների բրիգադ և մեկ օժանդակ ստորաբաժանում), որոնց հիման վրա էլ սկսեց ձևավորվել ադրբեջանական բանակը¹:

Անկախության հռչակումից անմիջապես հետո ԱԴՀ ղեկավարներն սկսեցին Թուրքիայի հետ բանակցություններ վարել՝ հատկապես ռազմական բնագավառում օժանդակություն ստանալու ակնկալիքով: ԱԴՀ հիմնադիրներից Մամեդ Ռասուլզադեն հանդիպում ունեցավ Էնվեր և Թալեաթ (1913-1918 թթ. Թուրքիայի ներքին գործերի նախարարը, Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչ) փաշաների հետ, որից հետո՝ 1918 թ. հունիսի 4-ին, Ադրբեջանը և Թուրքիան կնքեցին խաղաղության և բարեկամության համաձայնագիր²: Համաձայնագրի 4-րդ կետով Թուրքիան պետք է ռազմական օժանդակություն ցույց տար Ադրբեջանին (թեև առանց այդ համաձայնագրի էլ Նուրի փաշան իր բանակով անարգել գործունեություն էր ծավալում Ադրբեջանում), իսկ ԱԴՀ-ն պարտավորվում էր երկրից վտարել Թուրքիայի հետ պատերազմող երկրների բոլոր սպաներին ու պաշտոնյաներին, ԱԴՀ սահմանամերձ տարածքներից՝ զինված խմբավորումները³: Պայմանագրի կնքումից հետո ադրբեջանական բանակն ակտիվորեն սկսեց համալրվել թուրքական արտադրության զենք-զինամթերքով, համազգեստով, իսկ Գյանջայում թուրքերի օժանդակությամբ բացվեց սպայական դպրոց, որտեղ սկսեցին դասավանդել թուրք հրահանգիչներ⁴:

1918 թ. հունիսի 26-ին ԱԴՀ Նախարարների խորհուրդը բանակի կազմավորման վերաբերյալ հրամանագիր ստորագրեց, իսկ հուլիսի 11-ին երկրում հայտարարեց համընդհանուր զորահավաք, որով 1894-1899 թթ. ծնված մահմեդական բոլոր քաղաքացիները զորակոչվում էին բանակ⁵:

Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական «մերձեցումից» հետո երկու երկրների կառավարող շրջանակները խնդիր դրեցին գրավել Բաքուն, որն այդ ժամանակ ԱԴՀ մաս չէր կազմում, պետության մայրաքաղաքը Գյանջան էր: Դեռևս 1918 թ. գարնանը Էնվերը մշակել էր Բաքուն գրավելու ծրագիր, որի համաձայն՝ Նուրի փաշան պետք է Պարսկաստանով անցներ Անդրկովկաս և այնտեղ գործող Մուսավաթ կուսակցության ջոկատներից ու թուրք ռազմագերիներից ձևավորեր Կովկասի իսլամական բանակը և շարունակեր առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերը: 1918 թ. մայիսի 27-ին Էլիզավետպոլ ժամանած 300 սպաներից և հրահանգիչներից բաղկացած ռազմական առաքելությունը՝ Նուրի փաշայի

¹ Гусейнов А., Армия Азербайджанской Демократической республики, http://www.ourbaku.com/index.php5/Армия_Азербайджанской_Демократической_республики._1918_—_1920.

² Azərbaycan Xalq Cümhuriyyəti (Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը, ադր.) library.adau.edu.az/

³ Տե՛ս Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20 թթ., Եր., 2008, էջ 25:

⁴ Гусейнов А., Армия Азербайджанской Демократической республики, http://www.ourbaku.com/index.php5/Армия_Азербайджанской_Демократической_республики._1918_—_1920.

⁵ <http://mod.gov.az/mn/yaranma.html> /ԱԴ ՀՆ պաշտոնական կայք/

գլխավորությամբ, ձեռնամուխ եղավ իսլամական բանակի ստեղծմանը, որի կազմում ընդգրկվեցին նաև ադրբեջանական կորպուսն ու զինված ուժերը՝ փաստացի անցնելով Թուրքիայի տրամադրության տակ: Նուրի փաշան այդպիսով իր ձեռքում կենտրոնացրեց նաև իշխանության բոլոր լծակները¹: 1918 թ. հունիսի 15-ից իսլամական բանակի հրամանատարությունը, ունենալով ավելի քան 18-հազարանոց զորք, սկսեց ռազմական գործողություններ Բաքվի ուղղությամբ: Թուրքական 5-րդ և 15-րդ դիվիզիաներին էին միացել ադրբեջանական զորքերը: Նրանց հետևից, ինչպես ընդունված էր, շարժվում էր թաթարական խաժամուժը՝ գրավված տարածքներում թալանով զբաղվելու համար: 1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրք-թաթարական զորքերը գրավեցին Բաքուն: Նույն օրն էլ սկսվեց Բաքվի հայության կոտորածը, ինչին զոհ գնացին 30 հազար հայեր: Դա 1915 թ. Ցեղասպանության ուղղակի շարունակությունն էր², որը միանշանակ պետք է դիտել որպես 1915-1916 թթ. արևմտահայերի ցեղասպանության անքակտելի մաս, քանզի Հայոց ցեղասպանությունը որպես քաղաքական հիմնահարց թե՛ իր աշխարհագրական ընդգրկմամբ և թե՛ պատմական իմաստով, համաթուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր³:

Բաքվում հայկական կոտորածների կազմակերպիչներն ու ոգեշնչողներն էին թուրքական զորքերի հրամանատարներ Ֆաթալի Խան-Խոյսկին և Բեհբուք Ջևանշիր Խանը: Այդ վայրագները որոշել էին նախօրոք նախատեսված պլանի համաձայն բանդաների և ջարդարարների ողորմածությանը թողնել քաղաքի ու նրա շրջակայքի ամբողջ հայության կյանքն ու ինչքը⁴: «Թո՛ղ մորթեն և ջարդեն որքան կարող են, թո՛ղ առևանգեն և բռնանան, թալանեն ու կողոպտեն: Դա նրանց թույլ է տրվում և նրանց է թողնված՝ իրենց էներգիային ու հնարավորությանը համապատասխան»⁵: Բաքվի գրավումից հետո մուսավաթ-թրքասեր Խան-Խոյսկին հայտարարեց. «Ադրբեջանը հասավ իր նպատակին. վերջապես իրագործվեց սուլթանի դրոշի ներքո բոլոր թուրքերին միավորելու երազանքը: Կեցցե՛ բոլոր թուրքերի միավորումը»⁶:

Բաքվի գրավումից հետո ԱԴՀ ղեկավարությունը, Թուրքիայի հորդորով, տարածքային պահանջներ ներկայացրեց Անդրկովկասի հայկական զգալի տարածքների (Կարս, Ղարաբաղ, Ջանգեզուր, Շարուր-Նախիջևան, Բեյլուկ-Վեդի, Ջոդ-Բասարգեչար, Ջանգիբասար և այլն) նկատմամբ: Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարներն առավել կարևորում էին Ղարաբաղի ու Ջանգեզուրի բռնակցումը

¹ Տե՛ս Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20 թթ., Եր., 2008, էջ 28-29:

² Տե՛ս Դադայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920թ.), Նորավանք ԳԿՀ, Եր., 2006, էջ 4:

³ Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թվականներին, [http://hpj.asj-oa.am/2586/1/2008-3\(31\).pdf](http://hpj.asj-oa.am/2586/1/2008-3(31).pdf)

⁴ Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում (1918-1990 թվականներ) <http://hayaryakanch.wordpress.com/2011/06/27/>

⁵ Իշխանյան Բ., Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 6:

⁶ Տե՛ս Հովսեփյան Ա., Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր, Եր., 2012, էջ 109:

(այդ ժամանակ էր, որ ռազմական նախարար Խոսրով Բեկ Սուլթանովը նշանակվեց Ղարաբաղի և Ջանգեզուրի գեներալ-նահանգապետ), քանզի այդ տարածքները ոչ միայն կարող էին ուղիղ գծով միմյանց կապել Ադրբեջանն ու Թուրքիան, այլև ԱԳՀ համար հեշտացնել իշխանության տարածումը Շարուր-Նախիջևանի և Արարատյան դաշտավայրի՝ մահմեդականներով բնակեցված լայնարձակ տարածքների վրա: Ադրբեջանը ցանկանում էր Ղարաբաղ-Ջանգեզուր-Շարուր-Նախիջևան-Մակու գծով անմիջական կապ հաստատել Թուրքիայի հետ¹: Դա էլ բավական չէր. Ադրբեջանը հավակնություններ ուներ անգամ Երևանի նկատմամբ՝ պնդելով, թե այն թաթարական քաղաք է՝ հայերին «վեհանձնորեն» որպես մայրաքաղաք թողնելով էջմիածինը²:

Թուրքիայի հետ կապվելու համար Ադրբեջանը Հայաստանից պահանջում էր ամբողջ Ելիզավետպոլի նահանգը՝ բովանդակ Արցախով և Ջանգեզուրով, Երևանի նահանգից՝ Նախիջևանն ու Շարուրը, Երևանի և էջմիածնի գավառներից՝ Սադաբադի, Վեդիբասարի, Ջանգիբասարի շրջանները, Արաքսի աջ ափը, Մասիսի ստորոտներով՝ ամբողջ Սուրմալուն մինչև Կարսի մարզը, ինչպես նաև Սևանա լճի հյուսիսային ափերը, Վարդենիսը: Դա կազմում էր ավելի քան 50.520 քառակուսի կմ տարածք³: Թուրքիայի և Ադրբեջանի հիմնական պանթուրքիստական նպատակն էր ամբողջ Կովկասի գրավումն ու թրքացումը, ինչին հասնելն այնքան էլ դյուրին չէր: Մահմեդականները կազմում էին Անդրկովկասի ազգաբնակչության մեկ երրորդը: Երիտթուրքերը սեփական փորձով գիտեին, որ հայությանը դավանափոխ և ազգափոխ անելը անհնար է: Մնում էր միայն մեկ եղանակ. սեփական նպատակներին հասնել և իրենց ծրագիրը, ինչպես 1915-ին, իրականացնել մի ամբողջ ժողովրդի ցեղասպանությամբ: Հայերի թվաքանակը Ադրբեջանում մոտ 500.000 էր, որը հանրապետության ամբողջ ազգաբնակչության մեկ քառորդն էր կազմում: Հայերի ֆիզիկական ոչնչացմամբ Ադրբեջանի կառավարող շրջանները փորձում էին հասնել հանրապետության բնակչության միատարրության՝ միաժամանակ զրկելով հայերին իրենց պատմական տարածքների համար պայքարելու հնարավորությունից: Հայության ցեղասպանությամբ կոչնչացվեին նաև նրա ճարտարապետական ու մշակութային արժեքները՝ տարածքների պատկանելության իրական վկայությունները (հետագա տասնամյակներն ապացուցին վերոգրյալը):

Հայկական տարածքների նկատմամբ ունեցած իրենց նկրտումներն իրագործելու քայլերը թուրք-թաթարները ձեռնարկեցին Բաքվի գրավումից անմիջապես հետո, երբ նրանց համատեղ զորքերը շարժվեցին դեպի Ղարաբաղ՝ վերջնագիր ներկայացնելով հպատակվել ԱԳՀ-ին, զինաթափվել և թուրքական բանակը ներս թողնել Շուշի: Հոկտեմբերի 8-ին թուրքական երկրորդ դիվիզիան ԱԳՀ կառավարության ներկայացուցիչ

¹ Տե՛ս Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դաւադրական գործունէութիւնից մի էջ, Գլխավոր շտաբի տպարան, Եր., 1920, էջ 11:

² Տե՛ս Զարևանդ, Կրնա՞նք հաշտուիլ թուրքին հետ. Հայաստանի Հանրապետութիւնը 1918-1920 թվերին, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, թիվ 7, 1963, էջ 58:

³ Տե՛ս Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. է., Թեհրան, 1982, էջ 184:

Ադիլխան Ջիյադխանովի ուղեկցությամբ մտավ Շուշի¹: Նույն ամսին Կարաբեքիր փաշան մտավ Նախիջևան²: Թուրքիայի ռազմական պլանների մեջ էր մտնում գրավել Շուշին և, այն դարձնելով պլացդարմ, ամբողջ Լեռնային Ղարաբաղը ենթարկել Ադրբեջանին: Այնուհետև թուրք-ադրբեջանական ուժերը մտածում էին զինաթափ անել Գանձակի լեռնային մասի հայկական գյուղերը և ապա, հավաքագրելով Մուղանի, Ագարա գետի հովտի, Նախիջևանի և այլ մահմեդական վայրերի բազմահազար զինված հրոսակներին, գրոհել Ջանգեզուրի ու Դարալազյազի վրա: Ջանգեզուրի հարցում ևս Ադրբեջանին թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական աջակցություն էր ցույց տալիս Թուրքիան: Կան վկայություններ, որ Ջանգեզուրի դեմ հարձակումը նախապատրաստել են էնվերը և Նուրին, որոնք գտնվել են Ադրբեջանում, իսկ Անդրամիկի բանակի գործողությունների դեմ ՀՀ կառավարությանը բողոք էր ներկայացրել Խալիլ փաշան: Բացի այդ, Ադրբեջանի ղեկավարությունը գաղտնի Ջանգեզուր էր ուղարկել թուրք սպաների ու ասկյարների, որ կազմակերպեն տեղի մուսուլմաններին ընդդեմ ՀՀ իշխանությունների, որոնք դեպի Ջանգեզուր կազմակերպվող հարձակման ժամանակ թիկունքում պետք է միանային թուրք-ադրբեջանական զորքերին՝ բարձրացնելով ապստամբություն³: Այդ նպատակով Ադրբեջանը նաև զինում էր տեղի մահմեդական բնակչությանը և մեծ գումարներ փոխանցում նրանց՝ Երևանում գործող իրենց դիվանագիտական ներկայացուցչության միջոցով, ինչպես նաև իրականացնում հետախուզական մեծ աշխատանք⁴: Հաջողության դեպքում վերոնշյալ երկու շրջանները ևս պետք է միացվեին Ադրբեջանին: Դա թուրքերի և մուսավաթական ղեկավարների պանթուրքական ծրագրի մի կարևոր մասն էր, որ նրանք աշխատեցին իրագործել ամեն կերպ, նույնիսկ 1919 թ., երբ Անդրկովկասում նստած էին Անտանտի հաղթական ներկայացուցիչները՝ անգլիացիների գլխավորությամբ:

Այսպիսով, օսմանցիները և նրանց ադրբեջանցի կամակատարները նպատակ ունեին զավթել հյուսիս-արևելյան Հայաստանի գոյության համար կարևորագույն նշանակություն ունեցող հայկական տարածքները:

Բաքվի արյունալի դեպքերից հետո նախապատրաստվեցին և իրագործվեցին Գանձակ, Շամախի, Նուխի քաղաքների և Ադրբեջանի հայկական գյուղերի հայության կոտորածները: Միայն Ելիզավետպոլի գավառում այրվեցին 13 հայկական գյուղեր, որոնց բնակչության մի մասն անողորմ հոշոտվեց, իսկ կենդանի մնացածները տեղահանվեցին: Ծանր կացություն էր ստեղծվել նաև Նուխիի, Արեշի, Շամախու գավառներում, Ասկերանում, Աղդամում: Վերջինիս ուղղությամբ Նուրի փաշան կենտրոնացրել էր Գախպոլիի թերակղզուց Բաքվի ճակատ փոխադրված դիվիզիայի երկու լավագույն խմբերը: Բացի դրանից, բավականաչափ զորքեր էին տեղակայված ոչ միայն Աղդամի,

¹ Տե՛ս Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20թթ., Եր., 2008, էջ 42:

² Տե՛ս Хейфец А.Н., Советская Россия и сопредельные страны востока (1918-20 гг.), М. 1964, с. 54:

³ Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, Ֆ.Պ-200, ց.1, գ.441, թ. 31-32:

⁴ Տե՛ս Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դաւադրական գործունեութիւնից մի էջ., Գլխավոր շտաբի տպարան, Եր., 1920, էջ 9:

այլև հայ-մուսուլմանական սահմանի գրեթե ողջ երկայնքով: Նուրի փաշան փորձում էր համոզել Ղարաբաղի իշխանություններին, որ զենք չբարձրացնեն թուրքերի ու ադրբեջանցիների դեմ, ուղղակի հանձնվեն¹:

Թուրք-ադրբեջանական ռազմական, քաղաքական ու տնտեսական դաշինքն առավել ամուր հիմքերի վրա դնելու և հարաբերություններին իրավական ուժ տալու նպատակով 1919 թ. հոկտեմբերի 29-ին կնքվեց գաղտնի համաձայնագիր՝ «Թուրք-ադրբեջանական ռազմական միություն» անվամբ, որի 10-րդ հոդվածի «բ» կետով Ադրբեջանն առանց Թուրքիայի թույլտվության այլ պետությունների հետ հարաբերվելու իրավունք չուներ: Դա համատեղ պաշտպանության, ռազմական համագործակցության և ռազմական միություն ստեղծելու երկկողմ պայմանագիր էր՝ ուղղված Յայաստանի և հայ ժողովրդի դեմ²:

Պայմանագրի ստորագրումից հետո առավել լայն թափ ստացան թուրք-ադրբեջանական ռազմական համատեղ զործողությունները, թուրք հրահանգիչների ու մասնագետների կողմից ադրբեջանցի զինծառայողների վերապատրաստման աշխատանքները: Թուրք հրահանգիչների օգնությամբ 1919 թ. վերջերին, 1920 թ. սկզբներին արդեն Ադրբեջանում ստեղծվել էին հրետանու մասնագետների և դիպուկահարների պատրաստման մասնագիտական կենտրոններ³: Ադրբեջանական զորքերի շատ հրամանատարներ ևս թուրքեր էին: 1920 թ. սկզբներին Ասկերանի տակ հայկական զորքերը պարտության մատնեցին թաթարներին, որից հետո զեներալ Սելիմովի փոխարեն հրամանատար է նշանակվում օսմանցի Խալիլ փաշան՝ Էմվերի հորեղբոր որդին: Խալիլը թե՛ հրետանավորների, թե՛ հետևակի և հեծելազորի զորամասերը համալրում է օսմանցի փորձված սպաներով ու ասկյարներով և կարողանում է կոտրել հայ պաշտպանական զորքերի դիմադրությունը: Միայն Ասկերանի գրավումով թուրք-թաթարական զորքերը կարողացան շարժվել դեպի Շուշի: 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին Ղարաբաղում ևս թուրք-ադրբեջանական մարդասպանները ամեն կերպ աշխատեցին իրագործել իրենց վաղեմի հրեշային ծրագիրը՝ ոչնչացնել հայությանն այնտեղ, որտեղ հնարավոր էր: Ադրբեջանի ռազմական նախարար և գլխավոր հրամանատար զեներալ Մեհմանդարովը հրամայեց զորքին՝ չխնայել ոչ հայկական գյուղերը և ոչ էլ նրանց բնակիչներին⁴:

Ղարաբաղի հարցում առավել կոշտ դիրքորոշմամբ աչքի ընկան հատկապես իթթիհադականները: Դեռևս 1920 թ. հունվարի կեսերին Նուրի և Խալիլ փաշաների մասնակցությամբ Բաքվում կայացած կուսակցական համագումարում իթթիհադի առաջնորդ Կարաբեյ Կարաբեկովն ԱԴԳ կառավարությունից պահանջեց երկրի մեծահարուստներից հավաքել մեկ մլրդ ռուբլի և հատկացնել Նուրի ու Խալիլ

¹ Թումյան Զ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920), 28 դեկտեմբերի, 2013, <http://hetq.am/arm/news/31718/depqery-learnayin-xarabaxum-1917-1920.html>

² ԶԶ Ազգային արխիվ, Ֆ.Պ-275, ց.5, գ.184, թ. 67:

³ http://az.wikipedia.org/wiki/Az_rbayan_Demokratik_Respublikasini_milli_ordusu /Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ազգային բանակը, ադր./

⁴ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում (1918-1990 թվականներ) <http://hayaryakanch.wordpres.com/2011/06/27/>

փաշաներին՝ 200 հազարանոց բանակ ստեղծելու համար: Նաև առաջարկվում էր Ադրբեջան հրավիրել Մուստաֆա Քեմալին պանիսլամիստների խմբի հետ՝ «բազմա-չարչար կրոնակիցներին տանջանքներից փրկելու համար»¹:

Շուշին հայերից դատարկելու իր քաղաքականությունն իրագործելու նպատակով Ադրբեջանը, կրկին հետևելով Թուրքիայի օրինակին ու խորհրդին, ճիշտ «Համիդիե» ջոկատների նման ստեղծեց քրդերից բաղկացած զինված խմբեր, որոնց միջոցով էլ 1920 թ. մարտին ցեղասպանություն իրագործեց Շուշիում ու շրջակա հայկական գյուղերում, որի հետևանքով սպանդի ենթարկվեց ավելի քան 30000 հայ (այնքան, որքան կոտորվել էին Բաքվում)²: Նուրի փաշան թուրք սպաներով ու մի քանի հազարանոց բանակով ևս եղել է Շուշիում՝ նպատակ ունենալով այնտեղից կազմակերպել Ջանգե-գուրի վրա ծրագրված ադրբեջանական լայնամասշտաբ հարձակում³:

1920 թ. ապրիլին Ադրբեջանը խորհրդայնացվեց, ինչը, որքան էլ առաջին հայացքից զարմանալի է, ևս մտնում էր պանթուրքիստական ծրագրերի մեջ. կան տեղեկություններ, որ նոր ձևավորված ադրբեջանական խորհրդային ազգային կոմիսարիատի (« »-ի) բոլոր անդամները, բացի Ն. Նարինանովից, հանդիսանում էին Նուրիի և Խալիլի դրածոներ⁴: Դրանով հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող ցեղասպանությունը պետք է շարունակվեր այլ մեթոդներով ու ձևերով: Դեռևս 1919 թ. վերջերին Մուստաֆա Քեմալն արդեն նպատակ էր դրել միանալ բոլշևիկների ու Ադրբեջանի հետ, որպեսզի հնարավոր լինի վերջնականապես ոչնչացնել հայ ժողովրդին⁵: Բաքվում ստեղծվեց թուրքերի կոմունիստական կուսակցություն, որի հիմնադիրը հայտնի երիտթուրք գործիչ Ֆուաթ Սաբիթն էր⁶, ով միաժամանակ Կարաբեքիր փաշայի կապավորն էր և Հայաստանի ոչնչացման ծրագրերի մեջ կարևորագույն դերակատարներից մեկը:

Խորհրդայնացումով, ըստ էության, մուսավաթականներին փոխարինեցին ադրբեջանցի բոլշևիկները: Իրականում փոխվեց միայն հանրապետության «ցուցանակը», և Ադրբեջանի Հանրապետությունը վերանվանվեց Խորհրդային Ադրբեջան: Երեկվա մուսավաթականներից շատերը զբաղեցրին բարձր պաշտոններ: Նախկին բանակը, որի միջոցով Ադրբեջանն ու Թուրքիան չհայտարարված պատերազմ էին մղում Հայաստանի դեմ և իրականացնում հայերի ցեղասպանությունը, դարձավ Ադրբեջանի կարմիր բանակ՝ շարունակելով իր «սև գործը» հայ բնակչության նկատմամբ: Խորհրդային Ռուսաստանը չկարողացավ ռուսական հեղափոխությունը

¹ Տե՛ս Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20 թթ., Եր., 2008, էջ 154:

² Տե՛ս Չոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր, 1920 թ. ապրիլ), Եր., 2002, էջ 132:

³ Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, Ֆ.Պ-200, ց.1, գ.441, թ. 71-72:

⁴ Տե՛ս ՀՀ Ազգային արխիվ, Ֆ.Պ-200, ց.1, գ.427, մաս II, թ. 278-279:

⁵ Տե՛ս Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումն ու գործունեությունը 1918-20 թթ. Եր., 2006, էջ 113:

⁶ Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 200:

արտահանել Արևմտյան Եվրոպա և կայացման համաշխարհային հեղափոխություն ու դրա իրականացման ուղղությունը տեղափոխեց Արևելք: Դա իրականացնելու համար անհրաժեշտ էր ուժեղ հենարան և քանի որ Անդրկովկասում առաջինը խորհրդայնացվել էր Ադրբեջանը (որին միաժամանակ հովանավորում էր Թուրքիան), ուստի նա էլ դարձավ այդ հենարանը: Ինչպես պանթուրքիզմի, այնպես էլ «համաշխարհային հեղափոխության» ճանապարհին խոչընդոտ էր Հայաստանը և հայ ժողովուրդը: Այս անգամ էլ Հայաստանը և հայությունը պետք է զոհ գնային «համաշխարհային հեղափոխության» գաղափարին և դրա իրականացման ծրագրերին:

Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Հեղկոմը, ապա նաև 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը Հայաստանից պահանջեցին Ղարաբաղից, Ջանգեզուրից, Նախիջևանից դուրս բերել զորքերը: 1920 թ. ամռանը խորհրդային զորքերը սկսեցին այդ երկրամասերի գրավումը: Հայ բնակչությունը նորից հայտնվեց կոտորածի սպառնալիքի առաջ: Ադրբեջանական զինվորները, որ այժմ դարձել էին կարմիր ասկյարներ, 11-րդ բանակի ստորաբաժանումների հետ սկսեցին ռմբակոծել Ղարաբաղի, Ջանգեզուրի հայկական բնակավայրերը, սկսվեց ժողովրդի կողոպուտը և կոտորածը: Շուտով նրանց միացան քեմալականները, որոնք ևս պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Իրավիճակը փոքր-ինչ փոխվեց Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ խորհրդային Ադրբեջանի Հեղկոմը, ելնելով որոշակի քաղաքական նկատառումներից, 1920 թ. նոյեմբերի 30-ի իր հռչակագրով Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը հայտարարեց խորհրդային Հայաստանի մաս: Սակայն մի քանի ամիս անց Ադրբեջանի ղեկավարությունը կատաղի պայքար սկսեց իր իսկ ընդունած հռչակագրի դեմ: Այստեղ, հավանաբար, իր դերն էր խաղացել Թուրքիան: 1921 թ. մարտի 16-ին խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մոսկվայում կնքվեց «եղբայրության և բարեկամության» պայմանագիր, որով պատմական Հայաստանի տարածքներից Արևմտյան Հայաստանը, Սուրմալուի գավառը, Կարսի մարզը ճանաչվեցին Թուրքիայի տարածքներ, իսկ Նախիջևանը և Շարուրը տրվեցին խորհրդային Ադրբեջանին:

Նույն բախտին արժանացավ նաև Լեռնային Ղարաբաղը: 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ/ԲԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումն առանց քվեարկության, կամային որոշմամբ Լեռնային Ղարաբաղը հանձնեց խորհրդային Ադրբեջանին: 1923 թ. հուլիսի 7-ին՝ խորհրդային Ադրբեջանի Կենտգործկոմի ղեկը ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: 1924 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի կազմում ստեղծվեց Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը: Այս տարածքներն Ադրբեջանին բռնակցելուց հետո հայ ազգաբնակչության համար ստեղծվեց նոր վիճակ, որը միանգամայն կարելի է բնութագրել որպես «սպիտակ ցեղասպանություն»:

Տիգրան Դավիթավյան, Ռազմական համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդդեմ Հայաստանի (1918-1920 թթ.) – 1918-1920 թվականների թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը ընդդեմ հայ ժողովրդի գործադրելու փաստի մասին կան բազմաթիվ վկայություններ: Չկա մի ռազմական գործողություն, ուղղված հայության դեմ, որում թուրք բարձրաստիճան սպաների կամ զինծառայողների ներգրավվածության մասին տեղեկություն չլինի: Գոյության ընթացքում Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կողմից իրականացված հակահայկական քաղաքականությունը միանգամայն համահունչ էր Թուրքիայի շահերին և բխում էր պանթուրքիզմի նպատակներից:

Тигран Давитавян, Азербайджано-турецкое военное сотрудничество в 1918-1920 годах против Армении –

1918-1920

Tigran Davitavyan, Military cooperation between Azerbaijan and Turkey against Armenia in 1918-1920 – There is ample evidence to prove that the military cooperation between Turkey and Azerbaijan in 1918-1920 was targeted at the Armenian people. There is information about the involvement of Turkey's high-ranking officers and servicemen in all military operations. The anti-Armenian policy carried out by Azerbaijan Democratic Republic during its existence was entirely consistent with the interests of Turkey and stemmed from the objectives of Pan-Turkism.

Տիգրան Դավիթավյան – ՀՀ ԱԱԾ աշխատակից, զբաղվում է հայ-ադրբեջանական, հայ-թուրքական ռազմական հարաբերությունների ուսումնասիրությամբ



Արման Խաչիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔՆԵՐԻ/ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԼԱՎՈՐՈՒՄԸ

**Հայաստանի Հանրապետություն, Եվրոպական համայնքներ/Եվրոպական Միություն,
ՏԱՄԻՍ, վերափոխումներ, մարդասիրական օգնություն, պարենային անվտանգության
ծրագիր, Մեծամորի ատոմակայան**

Եվրոպայի հետ Հայաստանի կապերը ձևավորվեցին անկախության ձեռք բերելուն զուգընթաց և հիմնվեցին համընդհանուր պատմության և արժեքների, երկուստեք բարի կամքի դրսևորման ու պատրաստակամության վրա: 1990-ական թվականներին Հայաստանը, գտնվելով քաղաքական և տնտեսական բարդ վիճակում՝ փորձում էր գործընկերային հարաբերություններ հաստատել ոչ միայն եվրոպական երկրների հետ առանձին-առանձին, այլև դրանք միավորող միջազգային կառույցների հետ, ինչպիսիք էին ՄԱԿ-ը, ԵԽ-ն, ԵՀ-ն, ԵԱՀԿ-ն, ՆԱՏՕ-ն և այլն: Դրանցից յուրաքանչյուրը փորձեց աջակցել Հայաստանին՝ դուրս գալու գրեթե անելանելի վիճակից և վերադառնալու զարգացման բնականոն հուն: Իր անգնահատելի օժանդակությամբ հատկապես աչքի ընկավ ԵՀ-ն, որը Հայաստանը ներգրավեց իր նախաձեռնած գրեթե բոլոր ծրագրերում, որոնք միտում ունեին օգնել կառուցելու ժողովրդական արժեքների վրա հիմնված պետականություն, հաղթահարել անցումային շրջանի դժվարությունները և ստեղծել շուկայական տնտեսություն:

Խորհրդային Միության փլուզումը մեծ փոփոխություններ առաջ բերեց աշխարհի քաղաքական քարտեզի վրա, որի արդյունքում ձևավորվեցին նորանկախ պետությունները: Սկզբնական շրջանում այդ պետություններն ընկան քաղաքական, տնտեսական ճգնաժամի մեջ¹: Աշխարհաքաղաքական ուժեր հանդիսացող Եվրոպական համայնքները/Եվրոպական Միությունը (այսուհետ՝ ԵՀ/ԵՄ) և ԱՄՆ-ն սկսեցին ակտիվ քաղաքականություն վարել նախկին ԽՍՀՄ-ի տարածքում, նաև կովկասյան հանրապետություններում: Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց շատ ծանր կացության մեջ: Եթե ներքին տնտեսական ծանր դրությունը ավելացնենք հանրապետության լիակատար շրջափակումը, որին 1993 թ. սկզբներից մասնակցում էր նաև Թուրքիան, ինչպես նաև 1990-ական թվականներին Հայաստան գաղթած փախստականների օրհասական դրությունը և էներգետիկ ճգնաժամը, ապա հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի պատկերը կամրողջանա²: Այսպիսով, Խորհրդային Միության լուծարումից հետո ՀՀ-ն իր առաջին քայլերն

¹ Տե՛ս Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում, գլխ. խմբ. Ղազինյան Ա., Երևան, «Տիգրան Մեծ», 2010, էջ 45:

² Տե՛ս Հայոց պատմություն, գլխ. խմբ. Սիմոնյան Հր., Երևան, Ձանգակ 97 հրատարակչություն, 2000, էջ 454: